Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Քաղաք Երևան, 29 մարտի 2024 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Գ. Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Շիրվանյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան – <<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Բացակայում էին՝

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Բալյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Հրավիրված էին՝

Ա. Հայրապետյան - ՍԱՏՄ ղեկավար

Վ. Հարությունյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Ս. Ծառուկյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Ա. Մկրտչյան – ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Մ. Հայրապետյան – ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի պետ, վարչության պետի պարտականությունները կատարող

Ե. Ասատրյան - ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Գ. Պապոյանը առաջարկեց հաստատել օրակարգը, որում ընդգրկված էր 4 հարց և հարցերը զեկուցողն էր ՍԱՏՄ ղեկավար Արմեն Հայրապետյանը:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո ՍԱՏՄ ղեկավար Ա. Հայրապետյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվություն:

Ա. Հայրապետյանը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց ներկայության համար: Ներկայացնելով 2023 թվականի տարեկան հաշվետվությունը՝ նշեց նաև որ անդրադարձ կկատարի այն խնդիրներին, որոնք ունեն կարգավորման անհրաժեշտություն: Ներկայացվել է վերահսկվող օբյեկտների քանակը, այն է 26750 սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվածներ և 317000 գյուղացիական տնտեսություն: Ներկայացվեց Տեսչական մարմնի հնարավորությունները մարդկային ռեսուրսների տեսանկյունից, որի հաստիքների

ընդհանուր թիվը 301-ն է, իսկ վերահսկողություն իրականացնող տեսուչներինը 193, որից փաստացի համալրված է 157 տեսուչների հաստիքը:

Նախարարի ուշադրությունը հրավիրվեց գյուղացիական և տնային տնտեսությունների խնդրի վերաբերյալ հարցին, քանի որ օրենսդրության մեջ չկա հաշվառում, թե որոնք են գյուղացիական տնտեսություններ, ինչը դժվարություններ է ստեղծում պետական վերահսկողության, սուբսիդիաներ տրամադրելու տեսանկյուններից: Մեջբերվեց Ավստրիայի օրինակը, որտեղ շատ հստակ տարանջատված են տնային և գյուղացիական տնտեսությունները:

Ա. Հայրապետյանը անդրադարձավ 2023 թվականի ֆինանսական հատկացումների շրջանակին և իրականացված 7 միջոցառումներին, որտեղ նախորդ տարվա գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի վերահսկողության իրականացումը լաբորատոր փորձարկումների միջոցով թերակատարվել է:

Ներկայացնելով կատարված վերահսկողական միջոցառումները նշվեց, որ 2023 թվականի ընթացքում իրականացվել է 2500 վերահսկողական միջոցառում, նախորդ տարվա համեմատ ավելի քիչ, իսկ 2021թվականի համեմատ որոշակի շատ, բայց կարևոր հարաբերական ցուցանիշներն են խախտումների հայտնաբերման 55%-ը, այսինքն հայտնաբերվել է 1374 խախտում, ինչը համեմատական կարգով կարելի է նշել, որ 2022 թվականի հետ ավելի քիչ ստուգմամբ հայտնաբերվել է ավելի շատ խախտումներ:

Հաջորդիվ ներկայացվեց պլանային, ոչ պլանային ստուգումները, ինչպես նաև դիտարկումները, որոնց արդյունքները համեմատած 2022 թվականի հետ նույնպես բարելավվել են:

Սպանդանոցների մասին ներկայացնելով Ա. Հայրապետյանը նշեց, որ շատ դժվարությամբ է ավելանում քանակը, սակայն խախտումներն ավելի շատ են հայտնաբերվել նախորդ տարվա համեմատ: Կարևորվեց սպանդանոցային մորթի քանակը, որը նախորդ տարիների համեմատ բարձր է արձանագրվել 2023

թվականի 4-րդ եռամսյակում: Նշվեց նաև, որ ավելացվել է սպանդանոցային կետերը, սակայն կա մատչելիության և վարքագծի փոփոխության խնդիր, ինչը բարձրաձայնվել է նաև ՀՀ Վարչապետի մոտ հաշվետվության ներկայացման ընթացքում: Տարիներ շարունակ անասնահամաճարակային մշտադիտարկումներ են իրականացվել ամանորի նախօրեին, սակայն այժմ առաջնորդվում ենք մսի ծավալների սպառմամբ պայմանավորված վերահսկողությունը շարունակական իրականացնելու մասին: Ներկայացվեց նաև սպանդանոցային մորթի կառավարման նոր ծրագրերի ներդրման մասին, կարևորվեց նաև դրոշմակնիքների առկայությունը:Նախկինում փաստաթուղթը և միսը շուկայում հնարավոր չէր լինում նույնականացնել, ինչպես նաև շեշտվեց, որ պարտադիր է դարձել մորթը հաստատող տեսահոլովակի ներբեռնումը live տարբերակով և բացառվել է առանց փաստացի մորթի անասնաբուժական ձև 5 վկայականի տրամադրումը: Միաժամանակ հավելեց, որ այս գործողությունների արդյունքում հետաքրքրվածությունը ավելացել է նոր սպանդանոցային գործունեություն իրականացնելու համար:

Ա. Շիրվանյանը բարձրաձայնեց այն իրավիճակը, որ մարզային այցելությունների ժամանակ հարցեր են հնչեցրել, որ ցանկացած տեսանյութ ներբեռնելով՝ ոչ մորթին առնչվող, սպանդանոցային ձև 5 անասնաբուժական վկայականը տրամադրվում է:

Ա. Հայրապետյանը նշեց որ թեև ՍԱՏՄ համապատասխան աշխատակիցները այդ ամենն էլ են վերահսկում, սակայն պետք է թվային լուծումներ տալ այդ խնդրի վերահսկման համար:

Ա. Հայրապետյանը նշեց, որ խնդիր կա կենդանիների կատաղության հետ կապված՝ ինչի մասին պարբերաբար տեղեկացվել է և համայնքներին և իրավասու մարմիններին միջոցներ ձեռնարկել խնդրի վերաբերյալ, քանի որ հիվանդությունը փոխանցվում է նաև մարդկանց, ինչի արդյունքում արձանագրվել են նաև մահվան դեպքեր:

Ներկայացվեց նաև Ռուսաստանի Դաշնության հետ կապված խնդիրը, որն առնչվում էր կաթ-կաթնամթերքի հետ: Անդրադարձավ նախորդ տարի ունեցած և այժմ շարունակվող կաթ-կաթնամթերքի արտահանման հետ կապված խնդիրներին, ինչի արդյունքում եղել են քննարկումներ ՌԴ-ի համապատասխան կառույցի ղեկավար կազմի հետ և ՍԱՏՄ վերահսկողության արդյունքում 5 կաթնամթերք արտադրող կազմակերպություններին թույլատրվել է արտահանել արտադրանքը, սակայն մեկ տնտեսավարողի մոտ հայտնաբերված խախտման հանգամանքով պայմանավորված այս պահին 4 կազմակերպություններ ունեն արտահանելու հնարավորություն:

Ներկայացվել է բուսասանիտարական կարանտին օրգանիզմների վերաբերյալ իրականացված վերահսկողական գործողությունները և նշվել, որ ցուցանիշը համեմատելով 2022 թվականի հետ բուսասանիտարական իրավիճակը փոփոխություն չի կրել, սակայն որոշակի աշխարհագրական փոփոխություններ կան, ինչի մասին տեղեկացվել է Էկոնոմիկայի նախարարությանը, որպեսզի գյուղատնտեսություն վարողների հետ աշխատանքներ տարվեն, վերջիններս կարանտին օրգանիզմների նկատմամբ ավելի պահպանողական և զգույշ լինեն:

Ներկայացնելով սահմանային վերահսկողությունը՝ Ա. Հայրապետյանը նշեց, որ հատկանշական և տարբերվող է 2023 թվականի լաբորատոր փորձաքննության և փաստաթղթային անհամապատասխանությունների արդյունքում Հայաստանի Հանրապետություն ներկրվող վտանգավոր սննդամթերքի խմբաքանակների կանխարգելումը: Նշվեց այն խնդրի մասին, որը նաև բարձրաձայնվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից, այն է՝ բոլոր խմբաքանակների սահմանային վերահսկողությունը իրականացվում է միայն երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ և չի իրականացվում վերահսկողություն ԵԱՏՄ-ից ներկրվող որևէ բեռների նկատմամբ: Որպես օրինակ բերվել է նախադեպ, երբ Էկոնոմիկայի նախարարությունը ներկրված սերմացուի համար ուներ անհրաժեշտություն, որպեսզի ունենայինք վերահսկողության արդյունքում տրված փաստաթուղթ, բայց քանի որ ներկրվել էր ԵԱՏՄ-ից, տնտեսավարողը ՍԱՏՄ չէր

ներկայացրել, որ ներմուծում է իրականացրել և անցել էր սահմանը, օգտագործել էր բեռը, այնուհետև անդրադարձել էր ԱԱՀ վերադարձման պահանջին: ՍԱՏՄ-ն չէր կարողացել աջակցել, քանի որ չէր վերահսկել ներկրումը և չգիտեր այդ ցորենի մեջ կարանտին օրգանիզմ կար թե ոչ, խնդրահարույց է այն մասով, որ ներմուծման/տեղափոխման հետևանքով Հայաստանի Հանրապետության տարածք կարող են ներթափանցել բույսերի կարանտին օբյեկտներ, որոնք տարածվելով կհասցնեն հսկայական գյուղատնտեսական և տնտեսական վնասներ:

Էկոնոմոկիայի նախարարության կողմից շրջանառվող կառավարության որոշման նախագծին ՍԱՏՄ-ի կողմից ներկայացվել էր առարկություն: Դիրքորոշումը եղել է կոնկրետ դեպքի վրա, բայց հաշվի առնելով որ այս կարգավորումները նոր են սկիզբ առնում, որ մաքսային սահմանը միայն պետք է լինի պատասխանատուն և ՍԱՏՄ-ն բեռները չի վերահսկելու: Կրկին նշվեց որ տվյալ կոնկրետ դեպքի լուծմամբ խնդիրը չի լուծվել և հաջորդիվ անհրաժեշտ է այնպիսի կարգավորումներ, որպեսզի պարզ լինի վերահսկողության իրականացումը, միաժամանակ շեշտվել է այն դեպքը, որ ՌԴ-ն վերահսկողություն է իրականացնում ՀՀ-ից ՌԴ ներկրվող համապատասխան բեռների նկատմամբ և այստեղ բախվում ենք երկակի խնդրի առաջ, մի կոմից ՍԱՏՄ-ն Էկոնոմիկայի նախարարության հետ պատասխանատվություն է կրում ՀՀ ներմուծված վտանգավոր սննթամթերքի նկատմամբ, մյուս կողմից Էկոնոմիկայի նախարարությունը այդ գործառույթը չի իրականացնում կամ օրենսդրությամբ իրեն վերապահված չէ: Ստացվում է հետագայում խնդիրներ առաջանալու պարագայում, պարզվի ԵԱՏՄ-ից ներմուծված բեռ է, բայց արդյունքում ոչ մի պատկան մարմին որևէ պատասխանատվություն չի կրում՝ ոչ մաքսայինը և ոչ էլ ՍԱՏՄ-ն:

Էկոնոմիկայի փոխնախարար Ա. Շիրվանյանը հաստատեց առկա խնդիրը, սերմացուների ներկրման պարագայում ամբողջական փաթեթի հետ պետք է լինի նաև կարանտին հսկման ակտը, և քանի որ չէին կարողանում տրամադրել այդ փաթեթի հետ վերոնշյալ ակտը, ուստի չեն կարողացել դրա հիման վրա տալ դրական եզրակացություն, որպեսզի ԱԱՀ 20%-ը վերադարձի սերմացու ներմուծողներին, որը մեկ տարի շարունակ վերջնական հստակ լուծում չի ստացել: Վերջինս ներկայացրեց

նախագծի շրջանառության վերաբերյալ տեղեկատվությունը, որ քննարկվել է ֆինանսական կոմիտեի նիստում, սակայն մինչ այդ բազմաթիվ քնարկումներ են եղել նաև տարբեր շահագրգիռ գերատեսչությունների հետ՝ մասնավորապես Պետական եկամուտների կոմիտեի, ՍԱՏՄ-ի, ինչի արդյունքում տարբեր լուծումներ են առաջարկվել և մշակվել: Այս պահին որոշման նախագծի փաթեթը գտնվում է կառավարությունում: ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Ա. Դանիելյանը ևս նշեց, որ հարցը բազմակողմանի քննարկվել է և փորձ է արվել գտնել լավագույն լուծման տարբերակը: Առաջարկվեց ևս մեկ անգամ քննարկել խնդրի լուծման առաջարկվող տարբերակները էկոնոմիկայի նախարարության հետ և ամբողջական փաթեթը ներկայացնել հաստատման:

Ա. Հայրապետյանի կողմից ներկայացվեց 2023 թվականին սահմաններին անհամապատասխանության հայտնաբերման դեպքերը, որը ըստ 2022թվականի համեմատ ավելացել է 6 անգամ:

Ներկայացվեց սննդային գործոնով պայմանավորված թունավորման դեպքերը, որը 2023 թվականին կազմել է թվով 15-ը և մեծամասնությունը եղել են հանրային սննդի օբյեկտներում, հատկանշական է հանրային սննդի ոլորտում վերահսկողություն իրականացնելը և Ա. Հայրապետյանը կարևորեց, որ էկոնոմիկայի և Առողջապահության նախարարության հետ համատեղ քննարկումների արդյունքում որոշվել է, հանրային սննդի ոլորտում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգ ՎՎՀԿԿ (HACCP) ունենալը, որի միջոցով որակը հնարավոր է վերահսկել, ՍԱՏՄ ստուգաթերթերում հանրային սննդի ոլորտում ներառված չէ այդ հարցերը, այժմ հարցերը ստուգաթերթերում ներառելու նպատակով, սահմանված կարգով կուղարկվի համակարգման գրասենյակ, ինչը հավանաբար կառավարության որոշմամբ կհաստատվի, որից հետո հանրային սննդի ոլորտում կուենանք որակի վերահսկողության համակարգ:

Ա. Դանիելյանը նշեց, որ Ա. Հայրապետյանը նախկինում էկոնոմիկայի նախարարության հետ քննարկել էին ՎՎՀԿԿ համակարգի ներդրման հետ կապված գործողությունների իրականացումը, որովհետև եթե օրենսդրությամբ շարժվենք և

սկսենք վերահսկողությունը, հիմնականում բոլոր տնտեսավարողները պետք է փակվեն: Նախկին նախարար Վ. Քերոբյանը առաջարկել էր դիտարկել որոշակի ժամանակացույց, որ տնտեսավարողներին բաժանենք ըստ մեծության և փոքրության ռիսկի, բայց օրինակ սննդի օբյեկտները կամ նույնիսկ հիպերմարկետներին որպես առաջնային դիտարկվեր նախապես իրազեկում իրականացվեր, որ սկսելու ենք վերահսկել 6 ամսից, իսկ ավելի փոքրերին 2025-2026թվականին: Առաջարկը համաձայնել էինք, միայն մնում էր փաստաթղթավորել: Պարզապես փոքրերի համար պետք էր ստանդարտներ մշակել, այստեղ ակնհայտ է որ ՎՎՀԿԿ (HACCP) համակարգը փոքրերի համար կիրառելի չէ, առնվազն կփակվեն: ՎՎՀԿԿ (HACCP) համակարգի ներդնումը, դա ինչ որ մասնավոր ընկերության ստանդարտները ներդնում է և պետությանը հավաստիացնում է, որ բիզնեսը աշխատում է ստանդարտներին համապատասխան, Ա. Դանիելյանը նաև հավելեց, որ ՎՎՀԿԿ (HACCP) համակարգի ներդրողների ընտրությունը Էկոնոմիկայի նախարարության տիրույթում է, քանի որ նրանք հավատարմագրված են վերջինիս կողմից:

Նախարարը նշեց, որ ֆունդամենտալ առումով համաձայն է գաղափարի հետ, սակայն հատկապես կարևորեց հսկողությունը այն կազմակերպությունների նկատմամբ որոնք պետք է ներդնեն այդ համակարգը: Կարևորեց այդ կազմակերպությունների տեխնիկական և մասնագիտական բարձր պատրաստվածությունը, որպեսզի բացասական ազդեցություն չլինի շուկայի և տնտեսության վրա: <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ Ա. Պետրոսյանը ևս կարևորեց այս համակարգի ներդնումը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց այն աշխատանքի համար, որը տարվել էր ՍԱՏՄ-ի կողմից այս ուղղությամբ և առաջարկեց առաջնային ճիշտ և գրագետ իրազեկում, խորհրդատվություն կազմակերպել համակարգի ներդրման և մեխանիզմների վերաբերյալ: Ա. Շիրվանյանը նշեց, որ նոր պահանջ չի սահմանվում տնտեսվարողների համար, այն կա և ամրագրված է, որ յուրաքանչյուր տնտեսավարող պարտավոր է ՎՎՀԿԿ համակարգ ունենալ, ինչպես նաև սահմանված է ժամանակացույց և լրացուցիչ իրազեկման անհրաժեշտություն չկա:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց արտադրական գործունեության հետ կապված կասեցումների վերաբերյալ դեպքերը, որը նույնպես նախորդ տարիների համեմատ ավելացել են և հատկապես կարևորեց վերաբացվածները, որը նախորդ տարիների համեմատ ավելի շատ են, ինչը նշանակում է, որ ունենք նոր որակի արտադրական գործունեություն: Անդրադարձավ այս փուլում կասեցման և նմուշառման խնդիրներին, արտադրական գործունեությունը շարունակելուն, որին ևս Վարչապետը 2023 թվականի հաշվետվության ներկայացման ժամանակ անդրադարձավ, որ կասեցվում է, հետո պարզվում է տնտեսավարողը գործունեությունը շարունակում է, այսինքն նմուշը վերցվել և ուղարկվել է լաբորատոր փորձաքննության, այնուհետև պարզվել է որ խմբաքանակը արդեն սպառվել է: Նմանօրինակ հարցերը պահանջում են օրենսդրական կարգավորումներ, որը խնդիր է առաջացնում լիարժեք վերահսկողություն իրականացնելու համար:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց վարչական պատասխանատվություն կիրառելու մասին տվյալները, որը նույնպես նախորդ տարիների համեմատ ավելացել է, հետևաբար ավելացել է նաև նշանակված տուգանքների չափը, որտեղ նաև էական նշանակություն ունի ՎՎՀԿԿ(HACCP) համակարգի ներդրված չլինելու վերաբերյալ որոշումները: Հաշվի առնելով, որ 2023 թվականին 85 խախտում ՎՎՀԿԿ-ի մասով արձանագրվել է, ենթադրվում է, որ արդյունքում կհասնենք որակական փոփոխությունների, կունենանք որակի վերահսկման համակարգեր և աստիճանաբար կմեծացնենք ՍԱՏՄ վերահսկողության շրջանակը, որպեսզի որակական փոփոխություններ նկատվի երկրում՝ չճնշելով և չնեղացնելով բիզնեսին:

Ներկայացվեց նաև 2023 թվականի ընթացքում տարածաշրջանում գրացված դաբաղ SAT2 շտամ հիվանդության տեսակի պայքարի նկատմամբ լավագույն արդյունք ունենալու դեպքերից մեկը, երբ մի քանի պետական մարմինների շատ լավ օպերատիվ և սերտ համագործակցության արդյունքում, երբ համապատասխան պատվաստանյութ գոյություն չուներ, Էկոնոմիկայի նախարարությունը, <<ԳԾԿ>> ՊՈԱԿ-ը և ՍԱՏՄ-ն պատշաճ վերահսկողություն իրականացրեցին, որպեսզի կենդանիները չտեղաշարժվեն, համապատասխան պատվաստանյութը ներկրվեր, կենդանիները պատվաստվեին և այս մասով անկումներ և խնդիրներ չունեցանք,

սակայն Էկոնոմիկայի նախարարությունը պարբերաբար խնդիր է բարձրացնում պատվաստանյութի արդյունավետությունը SAT2-ի նկատմամբ հնարավորությունը չգնահատելու և հաջորդ տարիների համար պարզ չէ այդ պատվաստանյութով պետք է շարունակել, թե որևէ այլով, այդ հարցը օրակարգում կա, անհրաժեշտ է քննարկել և վերջնական եզրահանգման գալ:

Ներկայացվեց 2023թ. բուսասանիտարական ենթահսկման բեռների ՌԴ ներմուծման սահմանափակումները : 2023թ. նոյեմբերի 28-ին ՌԴ-ն սահմանափակել էր բուսասանիտարական ենթահսկման բեռների ներմուծումը, հարցը քննարկվեց Էկոնոմիկայի կողմից բարձրացված ԵԱՏՄ, և ՍԱՏՄ գործընկերների միջև տեսակապի միջոցով, որից հետո ՍԱՏՄ և ՌԴ համապատասխան կառույցի Ղեկավարների միջև քննարկման արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դրությամբ ներմուծումը ՌԴ վերականգնվել է, միևնույն քննարկման ժամանակ անդրադարձվել է նաև կաթնամթերքի արտահման թեմային նույնպես: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը հետևողականորեն իրականացնելու է վերահսկողական բոլոր համալիր միջոցառումները՝ կանխելու համար խախտումներով բեռների մատակարարումը Ռուսաստան: Առաջիկայում էլ նախատեսվում է լաբորատոր հնարավորությունները մեծացնել նաև Այրում-Բագրատաշենում, որպեսզի մի քանի տեղով ունենանք և Երևանում և Բագատաշենում, որպեսզի հնարավոր լինի ՀՀ-ից արտահանող համապատասխան ապրանքները ստուգել և դեպի ՌԴ արտահանվի արդեն ստուգված, որպեսզի նման խնդիրների առաջ նորից չբախվենք: ՌԴ-ն վստահեցրել է, որ միևնույն վերաբերմունք է դրսևորվելու Ռուսաստան մուտք գործող ցանկացած բուսական արտադրանքի մոնիթորինգի ժամանակ:

Ա. Հայարապետյանը նաև ներկայացրեց ՍԱՏՄ-ի և Եվրոպական հանձնաժողովի համագործակցության դրական արդյունքները, ինչի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունն ընդգրկել է Եվրամիության կողմից լիազորված երրորդ երկրների ցանկում, հնարավորություն ընձեռնելով Եվրամիության երկրներ արտահանել Հայաստանում արտադրված կաթի և/կամ ձվի պարունակությամբ

պատրաստված կոմպոզիտային արտադրանք, սա վերաբերում է հիմնականում հրուշակեղենին (սննդամթերք, որը պարունակում է ինչպես բուսական ծագման, այնպես էլ կենդանական ծագման վերամշակման արտադրանք):

Ներկայացվեց նաև Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարության համագործակցության դրական արդյունքները, ինչի արդյունքում համաձայնեցվել է ծովային և քաղցրահամ ջրերի վայրի կամ բուծված կենդանիների (ձկներ, երկփեղկավորներ, խեցգետնակերպեր և էխինոդերմներ) և նրանցից ստացված մթերքիների առողջության վկայականների նմուշները, մեղվի և մեղվաբուծական արտադրանքի արտահանման առողջության վկայականների նմուշները, միս-մսամթերքի արտադրանքի արտահանման առողջության վկայականների նմուշները և կաթ-կաթնամթերքի արտադրանքի արտահանման առողջության վկայականների նմուշները, որի արդյունքում բացվել են ՀՀ-ից ԱՄԷ վերոնշյալ ապրանքատեսակների արտահանումը: Ի հավելումն նշել է, որ այս տարի ունեցել ենք նաև կենդանի կենդանիների մասով արդեն համաձայնություն, կարող ենք նաև կենդանի կենդանիներ արտահանել: Ցավոք նշվել է, որ ձուկ-ձկնաթերքի մասով է որ որոշակի առաջընթաց ունեցել տնտեսավարողների կողմից խմբաքանակներ արտահանվել են, իսկ մնացածի մասով բիզնեսը չկա:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ ամբողջացվել է սննդի շղթայի օպերատորների բազան 2022 թվականի 13390 տնտեսավարողից դարձել է 2023 թվականին 26750, որի շնորհիվ ՊԵԿ և ՍԱՏՄ համագործակցությամբ պայմանավորված արձանագրվել է, որ իրենց ծանուցումների համակարգից օգտվելով և իրազեկելով տնտեսավարողներին, բերել սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվելուն: Սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցված տնտեսավարողների էլեկտրոնային հասցեները 2023 թվականին ավելացել են առնվազն 5 անգամ: Ներկայումս առկա 10000 էլեկտրոնային հասցեների պարբերաբար ուղարկվել է տեղեկատվություն սննդի շղթայում առավել հաճախ արձանագրված խախտումների, սննդային թունավորումներից խուսափելու

միջոցների, սպանդանոցային ծագման մսի վերաբերյալ նոր կարգավորումների և մի շարք այլ կարևոր հարցերի մասին:

Ներկայացվել է թեժ գծով ստացված զանգերի վերաբերյալ թվային տեղեկատվությունը, ինչը ևս ավելացել է նախորդ տարվա համեմատ, որը խթան է հանդիսացել նաև թեժ գծի հեռախոսահամարի վեցանիշ թիվը եռանիշ թվով փոխարինելը, որն էլ համաձայն արդյունքների ավելի հանրամատչելի է դարձրել ՍԱՏՄ ուղղված զանգերը:

Ամփոփելով հաշվետվությունը Ա. Հայրապետյանը ներկայացրեց ՍԱՏՄ առաջիկա հիմնական անելիքները շեշտելով 3 հիմնական ուղղություններ՝

1. Տեսչական մարմնի գործառույթների թվայնացման աշխատանքների ընդլայնում
2. Սպանդանոցներում արդիականացված և թիրախային պետական վերահսկողության շարունակականություն
3. Փաստացի արձանագրված դեպքերի հիման վրա ռիսկայնության վերլուծություն և գնահատման համակարգի ներդնում

<<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Չիլինգարյանը հարց բարձրացրեց ՌԴ կաթնամթերքի արտահանման հետ կապված և հետաքրքրվեց, թե միայն պանիր է արտահանվում ՌԴ, ի պատասխան Ա. Հայրապետյանը հաստատեց հիմնականում պանրի արտահանմանն էր վերաբերվում: Ինչպես նաև հետքրքրվեց կասեցման հետ կապված գործընթացով՝ օրինակ բերելով <JULIS> սննդի կետի նկատմամաբ կայացված կասեցման որոշումը, սակայն սննդի կետը շարունակում էր աշխատել: Հարցը վերաբերվում էր հսկման մեխանիզմին՝ ում միջոցով և ինչպես պետք է դա իրականացվի: Ա. Հայրապետյանը պարզաբանեց, որ արդեն իսկ իր ներկայացման ժամանակ անդրադարձել է խնդիրի արձանագրմանը և պետք են համապատասխան օրենսդրական կարգավորումներ:

Նախարարը ներկայացրեց իր դիտարկումները և ցանկություն հայտնեց ավելի հետևողական լինել նշված կետերի վերաբերյալ:

Հատկապես կարևորեց սպանդանոցների հասանելի լինելու հանգամանքը, քանի որ մարզային այցելությունների ժամանակ դժգոհություններ են եղել Շիրակի, Վայոց ձորի, Լոռու մարզում սպանդանոցային կետերի հեռավորության վերաբերյալ, ինչի արդյունքում ավելանում են փոխադրման ծախսերը, մյուս կողմից էլ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կեղծ անասնաբուժական N5 վկայականների վաճառքին՝ հաշվի առնելով եթե նման խոսակցություններ հանրության շրջանում կան, ուրեմն երևույթը առկա է:

Նախարարը արձանագրեց, որ կաթնամթերքի արտահանմանը նպաստելու նպատակով պետք է բանակցությունների, քննարկումների միջոցով, ինչպես նաև արտադրողների հետ ստանդարտների բարձրացման միջոցով, համատեղ աշխատանքների արդյունքում հասնել նրան,որ նվազագույնը այն կազմակերպությունները, որոնց մոտ մեր կարծիքով ունեն պատշաճ որակներ, ստանդարտներ և տեխնիկական պայմաններ և այդ արտադրանքը բավարարում է համապատասխան ստանդարտներին, կաթնամթերք արտադրողների համար բացվեն նոր շուկաներ, ինչը պետք է լինի աշխատանքի հիմնական գլոբալ թիրախը՝ հասնել այնպիսի բարձր որակական արդյունքների, որպեսզի դա նպաստի արտահանման աճին, իհարկե նաև զուգահեռ իրականացնել սպառողների իրավունքների պաշտպանություն, հիվանդությունների կանխարգելում:

Հաջորդը անդրադարձավ ԵԱՏՄ-ից ներկրվող բեռների հանդեպ վերահսկողություն չլինելու հանգամանքին, սա խնդիր է և պետք է լուծվի 2 ճանապարհով՝ կամ փոխադարձության սկզբունքով պետք է լինի այդ վերահսկողությունը կամ փոխադարձության սկբունքով չլինի:

Հետաքրքրվածություն հայտնեց հրուշակեղենի Եվրամիություն արտահանման վերաբերյալ, և առաջարկեց հրուշակեղենի արտահանման ոլորտում ունեցած ձեռքբերումները տեղայնացնել մյուս ապրանքների դեպքում: Կոմունիկացիայի խնդրի

դեպքում նախարարը հավելեց, որ Էկոնոմիկայի նախարարությունը պատրաստակամ է աջակցելու՝ կոմունիկացիան ապահովելու հարցում, որովհետև այն գործողությունները և վարչարարութունը որ իրականացնում է ՍԱՏՄ-ն, հանդիսանում են ռազմավարական նպատակներ, ունենալով էական ազդեցություն հետագա գործունեության համար:

Ներկայացված օրենսդրական լուծումների հարցում նախարարն առաջարկեց գտնել համապատասխան լուծումներ և քննարկել:

Վերջինս շեշտեց, որ եթե կա օրենսդրական փոփոխությունների կարիք և հնչեցվում է նիստում, ապա պետք է լուծում առաջարկել և նվազագույնը հաջորդ նիստին նշել թե ինչ փուլում է օրենսդրական փոփոխության նախաձեռնությունը, և սա վերաբերում է նաև նիստին հնչեցված այլ խնդիրներին, երկրորդ անգամ չանդրադառնալով նույն կարգավիճակով թեմային:

Ա. Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց և ընդունեց որպես հիմք, հետագա գործունեությունն իրականացնելու համար: Ինչպես նաև ի հավելումն ավելացրեց Նախարարի անդրադարձին Եվրամիության հետ տարվող աշխատանքներին, ցանկանում եմ նշել, որ վերջերս Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ այց է տեղի ունեցել ԱՄՆ, որտեղ քննարկվել է ծիրանի և մսամթերքի արտահանման հնարավորությունը ԱՄՆ-ի հետ բացելու, ինչի հիման վրա աշխատանքներ են իրականացվում, նշեմ նաև, որ մենք Եվրամիության հետ ունենք նաև հնարավություն, այն է մոնիթորինգային ծրագիր ենք իրականացնում ձկան և մեղրի մասով, որը մեղրի, այժմ էլ հրուշակեղենի մասով բաց է, բայց ձկան մասով դեռ ոչ, և բանակցությունների արդյունքնում պետք է հասնենք նրան, որպեսզի ձկան արտահանումը ԱՄՆ ևս բացվի:

ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող Ա. Առաքելյանը վերլուծելով սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցված տնտեսավարողների և ՍԱՏՄ տեսուչների թիվը, համապատասխանաբար յուրքանչյուրին քանի օբյեկտ է նախատեսվում ստուգման, հետաքրքրվածություն

դրսևորեց միջազգային փորձի վերահսկողության մեխանիզմների հետ համեմատական դնելուն, ինչին ի պատասխան Ա. Դանիելյանը տեղեկացրեց, որ ուսումնասիրվել է որոշ երկրների փորձը և որոշակի համեմատություններ ներայացրեց: Ա. Հայրապետյանը առաջարկեց հաջորդ նիստին համապատասխան միջազգային համադրումների ուսումնասիրությունը ներկայացնել:

Ա. Առաքելյանը նաև հետաքրքրվեց խախտումների դասակարգումների վերաբերյալ, ինչին ի պատասխան Ա. Հայրապետյանը ներկայացրեց համառոտ խախտումների դասակարգումները:

Ա. Առաքելյանը իր աջակցությունը ցուցաբերեց որոշ գիտական ինստիտուտների մասնագետների ներգրավման հարցում՝ ռիսկայնության վերլուծության և գնահատման համակարգի ներդրման գործում:

Ա. Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց աջակցության և պատրաստակամություն հայտնեց հետագա համագործակցության համար,ինչպես նաև տեղեկացրեց, որ դիմել են Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, որպեսզի հասկանալի լինի թե կենդանական որ հիվանդություններն են, որ տնտեսական մեծ վնասներ են հասցնում, միգուցե այդ հիվանդության տեսակներին թիրախավորել և այդ հիվանդությունները վերահսկելի լինեն, ցավոք հասկացանք, որ չկա այդպիսի վերլուծություն, որ կարողանանք իրագործել:

Նախարարը առաջարկեց անդրադառնալ օրակարգի 3-րդ հարցին, այն է օրենդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները օրենդրական բացերը լրացնելու, պետական վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ մի շարք խնդիրներին:

Ա. Հայարապտյանը նշեց, որ ենթահարցերով օրենսդրական խնդիրներ առկա լինելու մասին հանգամանքը ներկայացվել է, որոնց ՍԱՏՄ-ն բախվում է և ևս շեշտեց մի շարք օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին, մասնավորապես, բիզնես շահը և հանրային շահը հավասարակշռելուն, ենթահարցերի մյուս խումբը վերաբերում է նրան, որ կարգավորումներ չկան կենդանիների շուկաների հետ կապված, ինչպես նաև

անասնաբուժական դեղատների հետ կապված, ինչի արդյունքում վերահսկողությունը պատշաճ ձևով չի իրականացվում:

Նախարարը համաձայնեց ներկայացված փոփոխություններին և առաջարկեց օրակարգի 3-րդ հարցի 10 ենթահարցերի վերաբերյալ կոնկրետ թիրախներ դնել և յուրաքանչյուր հերթական նիստին ներկայացնել լուծման փուլում գտնվող յուրաքանչյուր ենթահարցը:

Նախարարը առաջարկեց անդրադառնալ օրակարգի 4-րդ հարցին, այն է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2024թ գնումների անվանացանկում ռեգուլյար տեսակի բենզինի և ամառային դիզելային վառելիքի միավորների գների փոփոխությանը:

Խորհրդի՝ օրակարգի մասին քվեարկությանը մասնակցած անդամների 7 (յոթ) կողմ ձայներով որոշվեց հավանություն տալ օրակարգի 4-րդ հարցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

2024-04-17 01:07:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Գ. ՊԱՊՈՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ե. ԱՍԱՏՐՅԱՆ